Ատոմ Մարգարյան, *տ.գ.թ., դոցենտ*, ՀՊՏՀ
Սերգեյ Սոլոդովնիկով, *տ.գ.դ., պրոֆեսոր*
Բելառուսի ազգային տեխնոլոգիական համալսարան
Ազա Միհրանյան, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՌԴ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտ
Դիանա Գալոյան *տ.գ.թ., դոցենտ*, ՀՊՏՀ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ[1]

Հիմնաբառեր – արտահանում, ներմուծում, երրորդ երկրներ, գներ, մաքսատուրքեր, մրցունակություն:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հաջողությունների հիմքում ընկած է, այսպես կոչված, «բնական» առևտրային գործընկերների հայեցակարգը, որը ենթադրում է, որ մինչև ինտեգրացիոն գործընթացները երկրների միջև առևտրի մեծ ծավալները ինտեգրման կայացումից հետո կհանգեցնեն աննկատ «առևտրի շեղման»: Այսինքն, որպեսզի ինտեգրումը դրականապես ազդի անդամ-երկրների բարեկեցության վրա, դրանք պետք է ունենան հետևյալ բնութագրիչները.

1. արտադրության գործոնների ապահովվածության փոխլրացնող բնույթ,
2. անդամ երկրների մերձություն (կամ ընդհանուր սահմանի առկայություն), ինչը թույլ կտա նվազեցնել տրասպորտային ծախսերը և ավելացնել փոխադարձ առևտուրը,
3. մինչև ինտեգրվելը փոխադարձ առևտրում առկա բարձր մաքսատուրքեր, իսկ երրորդ երկրների հետ առևտրում ցածր մաքսատուրքերի առկայություն,
4. համագործակցող երկրների միջև փոխադարձ դիվերսիֆիկացված ապրանքաշրջանառության մեծ ծավալ:

Ուստի, թե որքանո՞վ է Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը արդարացված և հրատապ, կփորձենք պարզաբանել այդ երկրների արտաքին առևտրային կապերի, դինամիկայի, ապրանքային կառուցվածքի ուսումնասիրության և մաքսատուրքերի փոփոխությունների վերլուծության հիման վրա (գնահատականները կտրվեն նաև ռուբլու արժեզրկման

[1] Հետազոտությունն իրականացվել է հայ-բելառուսական համատեղ № 13РБ-059 գիտական նախագծի՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շրջանակներում:

համատեքստում), որը մեզ թույլ կտա նաև գնահատել առևտրի ազատականացման ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա:

Այսպես, 2001թ. համեմատ 2013թ. ՀՀ ապրանքաշրջանառության ծավալները Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՆ) անդամ երկրների (Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս, Ղազախստան) հետ աճել են 6.3 անգամ, ընդ որում ներմուծումը՝ 6.6 անգամ, իսկ արտահանումը՝ 5.6 անգամ (Տես գծապատկեր 1): Աճ գրանցվել է գրեթե բոլոր տարիների կտրվածքով, բացառություն է կազմում միայն ճգնաժամային 2009թ., երբ արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ կրճատվեցին 8.7%-ով, իսկ ներմուծման ծավալները՝ 46.6%-ով: Եվ եթե 2010թ. այս երկրներին չհաջողվեց արտահանման և ներմուծման ծավալները հասցնել մինչճգնաժամային մակարդակին, ապա 2011թ. արտահանումը գերազանցեց մինչճգնաժամային մակարդակը 5.3%-ով, իսկ ներմուծումը՝ 8.7%-ով: 2012-2013թթ. այդ աճը պահպանվեց: Սակայն ներմուծման ծավալների առաջանցիկ աճը արտահանման ծավալների նկատմամբ հանգեցրել է ԵԱՏՄ երկրների հետ առևտրային հաշվեկշռի մշտական բացասական հաշվեմնացորդին, որը ուսումնասիրվող ժամանակահատվածում ավելացել է 7.1 անգամ:

Չնայած Հայաստանի և ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրաշրջանառության աճին, ՀՀ առևտրի գերակշիռ մասը կապված է Ռուսաստանի հետ, որին 2013թ. բաժին է ընկել դեպի ԵԱՏՄ անդամ երկրների արտահանման 95.5%, իսկ ներմուծման՝ 96.4%-ը: Բելառուսի և Ղազախստանի բաժինները արտահանման և ներմուծման մեջ համապատասխանաբար կազմել են 2.5% և 3.5%, 2.1% և 0.06%: Սա որոշ չափով հնարավոր է բացատրել այդ երկրների շուկաների հետ ՀՀ արտահանման ներուժի թույլ ինտեգրմամբ, որի պատճառներից են այդ երկրների հեռավորությունը և բեռնափոխադրումների ժամանակ կիրառվող սակագները: Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ երկրներին 2013թ. բաժին է ընկել ՀՀ համախառն արտահանման 23%-ը, իսկ ներմուծման՝ 25%-ը (Տես գծապատկեր 2):

Գծապատկեր 1.

ՀՀ արտահանումը, ներմուծումը և առևտրային հաշվեկշիռը ԵԱՏՄ անդամ երկրների հետ 2001-2013թթ. (մլն ԱՄՆ դոլար)[2]



[2] Գծապատկերը կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2002, էջ 511, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, էջ 457 և Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, էջ 475-ի տվյալների հիման վրա:

Գծապատկեր 2.

ԵԱՏՄ և հիմնական առևտրային գործընկերների բաժինը ՀՀ համախառն ատահանման և ներմուծման մեջ 2013թ. (%)[3]





[3] Նույն աղբյուրը

Ե՛վ արտահանման, և՛ ներմուծման մեջ բավական ծանրակշիռ է ՌԴ բաժինը: Եթե 2005թ. Ռուսաստանին բաժին էր ընկնում ՀՀ արտահանման 12.2%-ը, իսկ ներմուծման 13.5%-ը, ապա 2013թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 22% և 23.4%: Նույնը չի կարելի ասել ԵԱՏՄ մյուս անդամների մասին: Այսպես, Բելառուսի բաժինը ՀՀ ներմուծման մեջ 2005թ. 0.7% էր, իսկ 2013թ.՝ 0.9%, արտահանումը՝ 2005թ. 0.2% էր, իսկ 2013թ.՝ 0.5%: Ղազախստանի բաժինը այդ ընթացքում ներմուծման մեջ կրճատվել է 0.1%-ից մինչև 0.02%, իսկ արտահանման մեջ ավելացել է՝ 0.02%-ից մինչև 0.5%: Ընդ որում, Ղազախստանից ներմուծումը 2013թ., 2012թ. համեմատությամբ, նվազել է մոտ 12 անգամ, իսկ արտահանումը ավելացել է 1.8 անգամ:

ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ արտաքին առևտրային շրջանառության կառուցվածքային փոփոխությունները և առևտրի ազատականացման հետևանքները գնահատելու հարցում էական է նաև Հայաստանից դեպի ԵԱՏՄ մյուս անդամ երկրներ արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքի ուսումնասիրությունը: Այսպես, 2013թ. Ռուսաստանից Հայաստան ներմուծման 50%-ը բաժին է ընկել «Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ» ապրանքախմբին (ըստ ԱՏԳ ապրանքային անվանացանկի քառանիշ դասակարգման), 10%-ը՝ «Ցորեն և մեսլին», 9%-ը՝ «Նավթ և նավթամթերք», 5%-ը՝ «Այլումին չմշակված», և 2-ական տոկոս՝ «Միջուկային ռեակտորներ» ու «Արևածաղկի, բամբակի ձեթ» ապրանքախմբերին[4]: Ղազախստանից ներմուծման 44.8%-ը 2013թ. բաժին է ընկել «Հարթ գլանվածք երկաթից, ածխածնային պողպատից» ապրանքախմբին, 20.7%-ը%՝ «Մակարոնեղենին», 12.3%-ը՝ «Այլ պատճենահանման թուղթ, տրաֆարետ», 5.9%-ը՝ «Կափարիչ, խցան և նմանատիպ այլ իրեր ոչ թանկարժեք մետաղից» և 5.1%-ը՝ «Օդային և ոչ օդային պոմպ, օդափոխիչ, մասեր» ապրանքախմբերին: Բելառուսից ներմուծման մեջ գերակշռում է «Ռետինե նոր անվադող» ապրանքախումբը՝ 22.5%, «Ավտոմեքենա բեռնատար»՝ 14%, «Տրակտոր»՝ 7.6%, «Նավթ և նավթամթերք»՝ 6.9% և «Դեղամիջոց, բաղկացած առանձին նյութերից»՝ 4.4% ապրանքախմբերը[5]:

---

[4] ՀՀ-ԵԱՏՄ ապրանքային կառուցվածքի վերլուծությունը կատարվել է Միջազգային առևտրի կենտրոնի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա՝ http://www.trademap.org/

[5] Նույն տեղում: http://www.trademap.org/

ՀՀ-ից ԵԱՏՄ երկրներ արտահանման կառուցվածքում գերակշռում է «էթիլային սպիրտ չբնափոխված, սպիրտի 80%-ից պակաս խտությամբ ըմպելիքներ, լիկյորներ և ալկոհոլային այլ խմիչքներ» ապրանքախումբը: Դրան բաժին է ընկնում դեպի Ռուսաստան արտահանման 45.8%, Բելառուս արտահանման 76.6% և Ղազախստան արտահանման 33.2%-ը: Հաջորդ տեղում են «Ոսկերչական իրեր» և «Ադամանդե քար» ապրանքախմբերը: Դրանցից առաջինին համապատասխանաբար բաժին է ընկնում դեպի Ղազախստան արտահանման 20.9%-ը, իսկ երկրորդին դեպի Ռուսաստան արտահանման 10.2%-ը: Ընդ որում, եթե 2012թ. Ղազախստան էր արտահանվում 779 հզր դոլարի «Ոսկերչական իրեր», ապա 2013թ. դրանց արտահանման ծավալը կրկնապատկվել է: Էապես ավելացել է նաև Հայաստանից Ղազախստան արտահանվող «Հրակայուն աղյուս և խեցեգործ շինարարական արտադրանք» ապրանքախմբի ծավալը. 2013թ. դրա արտահանման ծավալները հասել են 1.3 մլն դոլարի, 2012թ. 87 հազ դոլարի դիմաց: 2013թ. կրկնապատկվել է նաև դեպի Ղազախստան ալկոհոլային խմիչքի արտահանման ծավալը:

ՀՀ-ից Ռուսաստան արտահանման ծավալում մեծ է նաև «Ձուկ (թարմ կամ պաղեցրած), բացառությամբ ձկան սուկին և ձկների այլ միս» (5.1%), «Ծիրան, բալ, դեղձ, կեռաս, հոն» (5.0%) և «Խեցգետնակերպեր» (3.8%) ապրանքախմբերի տեսակարար կշիռները: Փաստորեն արտահանվող ապրանքների մեծ մասը բաժին է ընկնում գյուղատնտեսական արտադրանքին և սննդի արդյունաբերությանը: Սակայն, գյուղատնտեսական արտադրատեսակների արտահանման գծով Հայաստանի ներուժը թերզարգացած է, ուստի մենք ներկա հնարավորություններով ի վիճակի չենք բավարարել ԵԱՏՄ շուկայի պահանջարկը, հատկապես, որ այդ ոլորտում առկա են նաև տեխնոլոգիական ոլորտի հետամնացության հաղթահարման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, ապրանքների ոչ բավարար մրցունակության հետ կապված հիմնախնդիրներ: Միևնույն ժամանակ առևտրի ազատականացումը կարող է հանգեցնել մեծ քանակությամբ գյուղմթերքի արտահանմանը դեպի ԵԱՏՄ երկրներ, ինչն էլ կտանի ՀՀ ներքին շուկայում գյուղմթերքի գների աճին: Օրինակ, այն բանից հետո, երբ Մաքսային միությունում զրոյացվեցին մաքսատուրքերը, շատ ղազախական ապրանքներ, ռուսական ապրանքների համեմատ, էժանացան: Սակայն, երբ Ռուսաստանում դրանց նկատմամբ պահանջարկը մեծացավ, Ղազախստանում դրանց գները բարձրացան: Խոսքը հատկապես

վերաբերում է սննդամթերքին և բենզինին[6]: Այս հիմնախնդիրը դարձել է նաև լայն քննարկման առարկա Հայաստանում: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալների, ընդհանուր առմամբ, 11 553 անուն ապրանքների 60%-ի դեպքում ԵԱՏՄ-ում գործում են ավելի բարձր մաքսային դրույքաչափեր, քան Հայաստանում, 14.5%-ի դեպքում՝ դրանք ավելի ցածր են, իսկ 17%-ի դեպքում՝ նույնն են: Իսկ ՀՀ միջինացված մաքսատուրքը 4.1%-ով ավելի ցածր է՝ ԵԱՏՄ միջինացված մաքսատուրքերից[7]: Օրինակ, ՀՀ-ում բենզինի և ցորենի մաքսատուրքը զրոյական է, ԵԱՏՄ-ում՝ 5%: Դեղորայքի ներմուծման գծով գործում է զրոյական մաքսատուրք, իսկ ԵԱՏՄ-ում այն 8-12.5% է: Քանի որ դեղորայքի մեծ մասը ներկրվում է ոչ ԵԱՏՄ երկրներից, ապա դժվար չէ ենթադրել, որ դրանց գները կարող են նվազագույնը 8%-ով աճել (Աղյուսակ 1): Շաքարավազի ներմուծման գծով Հայաստանում մաքսատուրքը 10% է, ինչը 1 տոննայի համար կազմում է 60-65 ԱՄՆ դոլար: ԵԱՏՄ-ում շաքարավազի 1 տոննայի համար գանձվում է միջինը 250 ԱՄՆ դոլար մաքսատուրք: ԵԱՏՄ-ում ավտոմեքենաների ներմուծման մաքսատուրքը նվազագույնը 25% է, Հայաստանում՝ արտասահմանյան մեքենաների համար գանձվում է 10% մաքսատուրք[8]: Հատկանշական է, որ 2013թ. Հայաստան է ներմուծվել 38.944 հատ մարդատար մեքենա, որոնցից ռուսական են ընդամենը 2112-ը[9]: Փաստորեն այն, որ մաքսատուրքերի մակարդակի բարձրացումը կհանգեցնի երրորդ երկրներից ՀՀ ներմուծվող մի շարք ապրանքների թանկացմանը՝ ակնհայտ է:

---

[6] Միացյալ Մաքսային միություն մուտք գործելու դեպքում պետք է խստորեն պաշտպանել հայրենական ապրանքները. հարցազրույց // [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://news.am/arm/news/171361.html

[7] Армения и Таможенный союз: оценка экономического эффекта интеграции //ЕБР, Центр интеграционных исследований, Санкт-Петербург, Доклад N 20, 2013, стр. 19.

[8] Թունյան Բ. Ո՞ր ապրանքները որքանո՞վ կթանկանան Հայաստանում՝ Մաքսային միությանն անդամակցությունից հետո // [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://168.am/2014/02/01/324861.html

[9] http://www.trademap.org/Bilateral_TS.aspx?nvpm=1|051||643||8703|||4|1|1|1|2|1|1|2|2

ԵՄ-28 երկրներից ՀՀ ներմուծված 10 ամենախոշոր ապրանքախմբերը 2013թ.[10]

Ծածկագիրը	Ապրանքախումբը	Ներմուծման ծավալը (հզր. դոլար)	ՀՀ մաքսատուրքը (%)	ԵԱՏՄ մաքսատուրքը (%)
2710	Նավթ և նավթամթերք (բենզին, մազութ, նավթ, դիզելային վառելիք, յուղ)	157823	0	4.9
3004	Դեղամիջոց, բաղկացած առանձին նյութերից	69406	0	8.1
7102	Ադամանդե քար	49898	0	11.9
7108	Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի	29196	0	18.5
2208	Էթիլային սպիրտ չբնափոխված, սպիրտի 80%-ից պակաս խտությամբ ըմպելիքներ, լիկյորներ և ալկոհոլային այլ խմիչքներ	20196	10	25.2
2309	Կենդանիների կեր	19475	5.2	11.5
8703	Ավտոմեքենա մարդատար	14688	10	18
2402	Ծխախոտ և սիգար	13030	10	23.4
4810	Ճենակավով կամ այլ անօրգանական նյութով պատված թուղթ	12356	0	8.2
1806	Շոկոլադ (կակաո պարունակող)	12162	10	11.8

Աղյուսակ 1-ի վերլուծությունից կարելի է ենթադրել, որ երբ ԵԱՏՄ միացյալ մաքսային օրենսգիրքը սկսի լիարժեքորեն գործել ՀՀ-ում, ապա խնդիրներ կարող են ծագել ոչ միայն ՀՀ ներքին գների բարձրացման հետ, այլ նաև արտահանման ծավալների կրճատման հետ: Խոսքը հատկապես վերաբերում է «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսա-թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» ապրանքախմբերին: Ինչպես գիտենք ՀՀ-Եվրոպական Միություն առևտրի (և՛ արտահանման, և՛

[10] նույն աղբյուրը

ներմուծման) շոշափելի մասը բաժին է ընկնում սույն ապրանքախմբին: Ընդ որում ներմուծվում է ոսկու հումք, իսկ արտահանվում է պատրաստի արտադրանք: Աղյուսակ 1-ից երևում է, որ ԵԱՏՄ շրջանակներում գործող մաքսատուրքերը տվյալ ապրանքախմբի ներմուծման առումով բավականին բարձր են: Քանի որ Հայաստան ներմուծվում է հումք՝ վերամշակման և արտահանման նպատակով, ուստի կբարձրանան նաև այդ ապրանքների արտահանման գները, ինչը բացասաբար կազդի Եվրամիության շուկայում հայկական ապրանքների մրցունակության վրա:

Թանկացումներ սպասվում են նաև բենզինի գների առումով: Ինչպես գիտենք Հայաստան բենզին ներմուծվում է հիմնականում Ռումինիայից և Բուլղարիայից: Ուստի, բենզինի շուկայում թանկացումները կարող են հասնել մինչև 5%:

Հարկ է նաև նշել, որ Հայաստանը, Ղազախստանը և Բելառուսը արտաքին առևտրի առումով խիստ կապված են ռուսական շուկայի հետ, սակայն միմյանց հետ առևտրում նկատվում է ինտեգրման ցածր մակարդակ: Այդ առումով էական խոչընդոտ (հատկապես նշված երկրների արտահանման համար) կարող է համարվել ռուսական ռուբլու արժեզրկումը: Բավական է միայն նշել, որ 2014թ. առաջին 4 ամիսների ընթացքում Ռուսաստանի ներմուծման ծավալները կրճատվել են 6.8%-ով, ինչը հանգեցրել է առևտրային հաշվեկշռի դրական մնացորդի բարելավմանը 8%-ով[11]: Մյուս կողմից ներմուծման ծավալների նվազումը հանգեցրել է ռուբլու փոխարժեքի ամրապնդմանը և արժեզրկման տեմպերի դանդաղեցմանը, սակայն տնտեսական դրության վրա արմատապես չի ազդել: Այնուամենայնիվ, եթե ենթադրենք, որ ռուբլու արժեզրկումը հանգեցրել է ԵԱՏՄ մյուս երկրների արտադրանքի թանկացմանը ռուսական շուկայում, ապա կարելի էր եզրակացնել, որ այժմ ռուսական ապրանքները օտարերկրյա շուկաներում կլինեն ավելի մրցունակ, հետևաբար և արտահանման ծավալները պետք է ավելանան: Սակայն 2014թ. առաջին 4 ամիսներին արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ կրճատվել են 0.5%-ով:

ՀՀ առտրաշրջանառության վրա ռուսական ճգնաժամի ազդեցությունը ավելի ցայտուն դրսևորվեց 2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, երբ առևտրաշրջանառությունը նախորդ տարվա նույն ամիսների համեմատ կրճատվեց համապատասխանաբար 1.2% և

[11] Федеральная служба государственной статистики России` http://www.gks.ru/

13,3%-ով: Նշենք, որ «առեւտրաշրջանառության» ցուցանիշը, բացի սեփական մանրածախ առևտրաշրջանառությունից, ներառում է նաեւ թեթև մարդատար ավտոմեքենաների մեծածախ վաճառքը և վաճառքի ծավալը: Առևտրաշրջանառության նոյեմբերյան անկումը հիմնականում պայմանավորված է եղել մանրածախ ապրանքաշրջանառության 2,2%-ով կրճատմամբ: Մեծածախ վաճառքը նվազել է «ընդամենը» 0,1%-ով, իսկ ահա մեքենաների վաճառքն աճել է 4,4%-ով[12]: Այդ տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ կտրուկ կրճատվել է ապրանքների վաճառքի ծավալը: Պարզ ասած, անցյալ ամիս բնակչությունն ավելի քիչ ապրանքներ է ձեռք բերել, քան մեկ տարի առաջ՝ 2013թ. դեկտեմբերին: Դրա հիմնական պատճառը Ռուսաստանից ստացվող տրանսֆերտների զգալի կրճատումն է, որոնք նաև 40%-ով արժեզրկվել են Ռուսաստանում և Հայաստանում:

Նույնական խնդիրներ ծագել են նաև ղազախական շուկայում: Տենգեի փոխարժեքի էական ամրապնդումը ռուսական ռուբլու նկատմամբ բացասաբար է ազդել Ղազախստանի տնտեսության արտադրական ոլորտների վրա: Այդ պատճառով Ղազախստանի ձեռնարկատերերի միությունը գտնում է, որ Ղազախստանը պետք է կիրառի ժամանակավոր առևտրային սահմանափակումներ՝ տեղական շուկան հովանավորելու նպատակով (ԵԱՏՄ համաձայնագիրը նախատեսում է ժամանակավոր սահմանափակումների կիրառում):

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԵԱՏՄ ձևավորումը դեռևս էականորեն դրական ազդեցություն չի թողել անդամակցող երկրների տնտեսությունների վրա, քանի որ համագործակցող երկրների ապրանքային շուկաները բավարար ինտեգրված չեն, ուստի և մաքսատուրքերի միասնականացումը առայժմ շահավետ է հիմնականում Ռուսաստանի համար, իսկ մնացած երկրների դեպքում՝ միայն Ռուսաստանի հետ առանձին-առանձին համագործակցելու պարագայում: Փորձագետներն այն կարծիքին են, որ «Ռուսաստանին ընդհանրապես դժվար է կոորդինացնել ցանկացած քայլ փոքր երկրների հետ: Ռուսաստանը շատ մեծ է, իրավահավասար գործընկերոջ համար դա բարդացնում է ցանկացած ինտեգրացիոն գործընթաց»[13]: Մյուս կողմից, անդամ երկրների բարեկեցության վրա ինտեգրումը թողնում է մեծ դրական

---

[12] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին, Երևան 2015, ԱՎԾ, էջ 66-71:

[13] Гринберг Р. Разговоры о Евразийском союзе как альтернативе ЕС контрпродуктивны // Народная газета, 05.07.2012 [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://ng.by/ru/issues?art_id=67228

ազդեցություն, եթե մինչև ինտեգրվելը փոխադարձ առևտրում առկա են բարձր մաքսատուրքեր:

Փաստենք, որ ԵԱՏՄ անդամ երկրների միջև առևտուրը բավականին ազատական է եղել ԱՊՀ շրջանակներում գործող ազատ առևտրի համաձայնագրի հիման վրա, ուստի ԵԱՏՄ ձևավորումը չի կարող հանգեցնել այդ երկրների միջև «առևտրի ստեղծման» կամ «առևտրի շեղման» էական էֆեկտների: Իհարկե, հետագայում ԵԱՏՄ երկրների համագործակցությունը կարող է ապահովել լրացուցիչ օգուտներ կապված ներճյուղային առևտրի զարգացման և կոոպերացիոն գործընթացների խորացման հետ: Ավելին, երկարաժամկետ հատվածում դա կարող է հանգեցնել ՀՀ մրցունակության բարձրացմանը և ներդրումների ավելացմանը: Սակայն, «գլխավորն այն է, որպեսզի մասնակից երկիրն ինքը ձգտի սեփական զարգացմանը՝ հույսը չդնելով միայն ինտեգրման վրա: Ինտեգրումը հաջող է զարգանում միայն այն դեպքում, երբ տարածաշրջանային միավորումներին մասնակցող ազգային տնտեսությունները գտնվում են վերելքի մեջ»[14]:

АННОТАЦИЯ

Атом Маргарян, Сергей Солодовников,
Аза Мигранян, Диана Галоян

ВОЗДЕЙСТВИЯ ИНТЕГРАЦИИ РЫНКОВ НА ЭКОНОМИК ГОСУДАРСТВ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА

Ключевые слова – *экспорт, импорт, третие страны, цены, пошлины, конкурентоспособность.*

В основе условий, при которых региональная экономическая группировка окажет улучшающее воздействие на благосотояние отдельной страны, лежит так называемая концепция «естественных» торговых партнеров, предполагающая, что значительный объем товарооборота между странами до интеграции будет вести к незначительности «отклонения торговли» после нее. Таким образом, в статье рассмотрено насколько оправданым и актуальным в отправной точке является членство Армении в Евразийском экономическом союзе. Исследование было проведено на основе анализа динамики и товарной структуры внешнеторговых связей стран-членов, а так же с помощью изучения изменений в таможенных пошлинах (в контексте девальвации рубля), что позволило нам оценить эффект от либерализации торговли на экономике РА.

[14] Հուսաինով Բ. Գլոբալացման մարտահրավերները և ինտեգրացիոն գործընթացների ուժեղացումը // «21- րդ ԴԱՐ », թիվ 4 (50), 2013 թ. էջ 79:

ANNOTATION

Atom Margaryan, Sergej Solodownikow,
Aza Mihranyan, Diana Galoyan

COMMODITY MARKETS INTEGRATION INPACTS ON THE ECONOMIES OF EAEU

Keywords – *export, import, third countries, prices, taxes, competitiveness.*

On the base of the conditions, in which regional economic grouping will have an improving impact on the prosperity of a country, lies the so-called concept of «natural» trade partners, assuming that a significant volume of trade between the two countries before integration will lead to an insignificante «trade diversion» after it. Thus, in the article the author reviewed how justified and relevant was Armenia's membership in the Eurasian Economic Union at the starting point. The study was conducted based on the analysis of the dynamics and commodity structure of foreign trade relations of member countries, as well as by studying the changes in customs duties (in the context of the devaluation of the ruble), which allowed us to evaluate the effects of trade liberalization on the economy of Armenia.